* * *

Նորից եկան էն հավքերը
Հեռվից եկան էն հավքերը,
Որ գարնանը կուգային։
Կանանչ կապա են հագել,
Կանանչ ճամփա են եկել,
Կանանչ մարգին ման կուգան։
– Կանչե՛, հավիկը՛ս, կանչե՛
Կանչե՛, լավիկը՛ս, կանչե՛,
Կանչե՛, կանչիդ ես ղուրբան։

Նորից եկան էն հավքերը,
Հեռվից եկան էն հավքերը,
Որ ամառը կուգային։
Կարմիր կապա են հագել,
Կարմիր ճամփա են եկել,
Կարմիր վարդին ձեն կուտան։
Երգե՛, հավիկը՛ս, երգե՛,
Երգե՛, լավիկը՛ս, երգե՛,
Երգե՛, երգիդ ես ղուրբան։

Նորից եկան էն հավքերը,
Հեռվից եկան էն հավքերը,
Որ աշնանը կուգային
Դեղին կապա են հագել,
Դեղին ճամփա են եկել,
Ու խաշամին ման կուգան։
Խոսե՛, հավիկը՛ս, խոսե՛,
Խոսե՛, լավիկը՛ս, խոսե՛,
Խոսե՛, խոսքիդ ես ղուրբան։

Նորից եկան էն հավքերը,
Հեռվից եկան էն հավքերը,
Որ ձմեռը կուգային։
Ճերմակ կապա են հագել,
Ճերմակ ճամփա են եկել,
Ճերմակ ձյունին ման կուգան։
Ձենե՛, հավիկը՛ս, ձենե՛,
Ձենե՛, լավիկը՛ս, ձենե՛,
Ձենե՛, ձենիդ ես ղուրբան։